ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ՆՀ-896 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի աշխատանքների արդյունավետությունն ապահովելու նպատակով

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-896 հրամանագրի (այսուհետ՝ հրամանագիր) 1-ին կետով հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն» բառերը փոխարինել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն» բառերով.

2) «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության պետ» բառերը փոխարինել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ներկայացուցիչ» բառերով:

2. Հրամանագրի 1-ին կետով հաստատված 2-րդ հավելվածից հանել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն» բառերը:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2015թ. մարտի 16
Երևան
ՆՀ-240-Ն

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՔ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«17» 03 2015թ. ՀԱՄԵՄԱՏՎԱԾ
Մուտք No 3693